ԱԿԱԴԵՄԻԱ. ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐՆ ԱՆՑՆՈՒՄ ԵՆ, ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ՝ ՄՆՈՒՄ

Գիտությունների ազգային ակադեմիան իր հիմնադրման 60-ամյա հոբելյանը դիմավորում է բավականին բարդ ու հակասական կացության մեջ: Այն նմանվում է անցյալի ու ներկայի տահմանագծին գտնվող ճանփաբաժանի, որից դեպի ապագան առաջնորդող արահետները դեռեւս անորոշ են եւ մեր գիտնականների, եւ, կարծում ենք, նաեւ իշխանությունների ու ողջ հասարակայնության համար:

Սկսնայտ է, որ խորհրդային տարիներին բուռն ծաղկում ապրած, իսկ Հայաստանի անկախացումից հետո փաստորեն փլուզման ու կազմալուծման եզրին հասած հայ գիտական կյանքն ու միտքը կանգնած են լուրջ երկընտրանքի առջեւ: Մի կողմից՝ գիտության կազմակերպման ու կոորդինացման խորհրդային ժամանակներից մնացած մեխանիզմներն են հակասության մեջ մտել նոր իրամիճակից բխող մարտահրավերների հետ եւ, մյուս կողմից՝ անկախացումից հետո գիտության նկատմամբ պետության վերաբերմունքն ու դրանից բխող քաղաքականությունը:

Այդ զույգ հակասությունները հանգեցնում են նրան, որ գիտությունն աստիճանաբար մեր երկրում դառնում է ցանկալի նյութ ազգի հանճարի մասին դատողություններ անելու համար, բայց միաժամանակ ավելորդ բեռ՝ այդ դատողություններին համապատասխանող քաղաքականության մշակման նպատակահարմարության տեսանկյունից:



Ընդ որում, եթե նախկին իշխանությունների օրոք կասկածի տակ էր դրվում ակադեմիա ունենալու անհրաժեշտությունն անգամ, ապա ներկայումս, ընդհակառակը, որքան շատ է խոսվում Հայաստանը գիտության ու գիտատար արտադրության երկիր դարձնելու անհրաժեշտության մասին, այնքան ակնհայտ է դառնում, որ ավելի ու ավելի է խորանում ցանկության ու հնարավորությունների հակաթեզը:

Ինչն է խոչընդոտում Հայաստանում գիտության նոր վերելքին, որի անհրաժեշտությունը, կարծում ենք, այլեւս ենթակա չէ քննարկման: Արտաքուստ գոյություն ունի այս հարցի միակ, քննարկման անգամ չենթարկվող պատասխանը՝ ֆինանսական միջոցների բացակայության փաստարկը: Բայց արդյո՞ք դա այդպես է: Կարծում ենք, որ՝ ոչ: Պետությունն այսօր հնարավորություն ունի ֆինանսավորել դեռեւս գիտությամբ զբաղվող գիտնականներին, քանզի վերջիններիս թիվը շատ փոքր է: Այդ սահմանափակ թվով գիտնականներն էլ կարող են գոնե պահպանել հայկական գիտության լավագույն ավանդույթները, եթե նրանց ջանքերը կոորդինացվեն համապատասխան կազմակերպական մեխանիզմների միջոցով:

Իրականությունն այն է, որ բացակայում են եւ այդ մեխանիզմները, եւ դրանց ձեւավորման ու պետական ֆինանսավորման քաղաքականությունը: Պատճառն ակնհայտ է. ակադեմիան շարունակում է նստած մնալ գրեթե նույն՝ խորհրդային ժամանակների հաստիքների ցուցակի ու կառավարման խիստ ճյուղավորված համակարգի վրա, որը կարող էր ֆինանսավորել միայն հզոր ու հարուստ խորհրդային պետությունը: Նման համակարգը ֆինանսավորելու անհնարինության ու անպատակահարմարության գիտակցումը հանգեցնում է նրան, որ գիտության նկատմամբ կիրառվում է «յոլա տանելու» քաղաքականություն, այսինքն՝ եւ գիտությամբ զբաղվող, եւ չզբաղվող գիտնականներին փաստորեն տրվում է ոչ թե աշխատավարձ, այլ թոշակի նման մի բան՝ հավասարարական սկզբունքով:

Նման քաղաքականությունը հանգեցնում է նրան, որ գիտնականների մեծամասնությունը առավելաբար զբաղվում է ոչ թե իր բուն գործով, այլ հիմնականում դասախոսական աշխատանքով: Դրանից հիմնականում տուժում են երիտասարդ, հեռանկարային կադրերը, որոնք ցանկանում են ու կարող են զբաղվել գիտությամբ: Իսկ սա ձեւականորեն հաստիքացուցակներում գրանցված, բայց գիտական արդյունք չտվող «գիտնականներին» միանգամայն ձեռնտու է նման միճակը, քանի որ կրանցց 15-20 հազար դրամի դիմաց ոչ գիտական արտադրանք փաստորեն ցի էլ պահանջվում:

Ստեղծված միճակը ցի խանգարում նաեւ տարեց, բայց արդեն ակադեմիկոսի կոչում ունեցող գիտնականներին, որոնց համեմատաբար տահմանափակ պահանջմունքները բավարարելու համար համապատասխան միջոցներ հատկացվում են որոշ գործարարների կողմից: Արդյունքում առաջվում է, որ նրանք, ովքեր ի միճի են զբաղվել գիտությամբ՝ ֆինանսավորում չունեն, իսկ նրանց, ովքեր պարզապես ժամանակ են սպանում ակադեմիայի պատերի ներսում՝ միանգամայն ձեռնտու է ստեղծված պարադոքսը: Կառավարությունն էլ իր հերթին գիտության ֆինանսավորումը միայն ռեալ արդյունքների վրա կենտրոնացնելու գործուն մեխանիզմներ մշակելու փոխարեն հատկացնում է իր չնչին գրոշներն ու լվանում ձեռքերը:

Հարց է առաջանում մինչեւ ե՞րբ պետք է շարունակվի այս երկրորդականի աչքակապությունը...

ԱՐՏԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ